ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹՐՔԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՐԲԱՆՈՑՆԵՐՈՒՄ (1915 -1918 ԹԹ.)

Նարինե Մարգարյան

ա. Թրքացման քաղաքականության իրականացումն օրենքների, հրամանների ու հեռագրերի շրջանակներում

Հայոց ցեղասպանության իրագործման ընթացքում երեխաներն ամենախոցելի խումբն էին: Ջանգվածային կոտորածների ու գաղթի ժամանակ նրանք ենթարկվում էին բազմակողմանի բռնաճնշումների: Տարագրության ճանապարհից, ծանր կորուստներից հետո նրանք անընդհատ բախվում էին նորանոր դժվարությունների՝ փորձելով հաղթահարել վերապրելու խնդիրը:

Հայոց ցեղասպանության իրագործման ընթացքում թրքացման ու ձուլման քաղաքականությունը եղել է կարևոր բաղադրիչ մաս: Այդ են վկայում օսմանյան փաստաթղթերը, որտեղ պարզորոշ երևում է, որ թուրքական կառավարությունը նպատակ է դրել հայ երեխաներին համակարգված ձուլելու մուսուլմանական հասարակությանը: Երեխաները՝ որպես ազգի անբաժանելի հատված, նույնպես ցեղասպանության զոհ են դառնում[1]: Նրանք նաև բռնի կրոնափոխության առավել դյուրին հատվածն են. նրանց իսլամացման գործընթացը, ազգային ու կրոնական ինքնագիտակցության մոռացությունն առավել վաղ հասակում ավելի դյուրին է իրականացնել: Հենց այս քաղաքականությունն ու տրամաբանությունն էլ ընտրել էր երիտթուրքական կառավարությունը: Վերջինս նպատակ էր դրել իր հսկողության տակ գտնվող որբանոցներում «ազգափոխ» անելու այդ երեխաներին ու ծառայեցնելու թուրք ազգի շահերին, չնայած միշտ էլ մտավախություն է ունեցել, որ այդ երեխաներն այդ կերպ փրկվելով, հետագայում վրեժխնդիր կլինեն: Հայտնի ցեղասպանագետ Վահագն Դադրյանը, անդրադառնալով Հայոց ցեղասպանության տարիներին հայ երեխաների բռնի իսլամացման խնդիրներին, իրավացիորեն նշում է, որ թուրքերը գնահատում էին հայ երեխաների գենոֆոնդը՝ նրանց դիտարկելով որպես թուրք ազգի գենային նկարագիրը հարստացնելու անգնահատելի աղբյուր[2]:

Հայոց ցեղասպանության տարիներին իսլամացումը դիտարկվել է միաժամանակ և՛ նախապայման, և՛ հետևանք: Չնայած այն, ինչպես թուրքական կողմն էր հավաստիացնում, նախապայման էր նրանց փրկության համար, սակայն այդ գործընթացը հեռու էր փրկություն կոչվելուց: Հետևանքն էլ այն էր, որ նրանք իսլամ ընդունելուն զուգահեռ, փոխում էին իրենց մայրենի լեզուն, մշակույթը, նույնիսկ անձնանունները: Դանիացի պատմաբան, ցեղասպանագետ Մաթիաս Բյորնլունդը

---

1 Տե՛ս Dadrian V., *Children as Victims of Genocide: The Armenian Case*, The Issues of The History and Historiography of The Armenian Genocide, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, № 7, Երևան, ՀՑԹԻ, 2003, էջ 3:

2 Նույն տեղում, էջ 4:

հայերի ձուլման խնդիրներին անդրադառնալիս եզրակացնում է, որ կրոնի, լեզվի, մշակույթի, անգամ անձնանունների հարցում մուսուլման ընտանիքներում, կառավարական որբանոցներում ու հասարակական ոլորտներում իրականացվող համակարգված ճնշումների հետևանքով մնում էր միայն սիստեմատիկ թրքացման պատրաստ կենսաբանական «հում նյութը»[3]: Այս պարագայում մարդը ֆիզիկապես չի վերանում, բայց նա այլևս չի կարող ապրել որպես տվյալ ազգի ներկայացուցիչ:

Հայ երեխաների բռնի իսլամացումը կատարվել է երկու մակարդակով՝ պետության և հասարակության լայն զանգվածների կողմից: Բազմաթիվ հայ երեխաների թուրքերն ու քրդերն առևանգում էին, երբեմն՝ «որդեգրում», ու նրանք, աստիճանաբար իսլամական միջավայրում ապրելով, թրքանում ու ձուլվում էին այդ հասարակությանը: Հաճախ հայ երեխաներին կառավարության հրամանով հանձնում էին այնպիսի գյուղերի ու մարզերի թուրք բնակիչների, որտեղ հայեր ու օտարներ չէին գտնվում[4]:

Պետական մակարդակով իսլամացնելու համար հիմք են ծառայել պաշտոնական հրամաններն ու հեռագրերը: Այստեղ տեղահանությունների ու բնաջնջման ողջ ընթացքում հայ երեխաների համար օգտագործվել է "*bakim ve tarbiye*"՝ թարգմանաբար «խնամք ու դաստիարակություն» արտահայտությունը:

1915թ. նոյեմբերի 16-ի ներքին գործերի նախարարության անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագրում՝ ուղղված Հալեպի ու Դամասկոսի նահանգապետարաններին, պահանջվում է. «Եթե... նահանգներում կան երեխաներ, ովքեր ոչ ոք չունեն, կրթության և դաստիարակության համար նրանց ուղարկել Ստամբուլ»[5]: 1915 թ. դեկտեմբերի 12-ին Հալեպի կուսակալությանն է ուղղվել *ներքին գործերի նախարար* Թալեաթի հետևյալ հեռագիրը. «Հաւաքեցէք եւ սնուցէք այն որբերը միայն որոնք չեն կրնար յիշել զուլումը, որուն ենթարկուեցան իրենց ծնողները»[6]:

1915 թ. դեկտեմբերի 30-ի՝ Նիղդեի գավառ ուղարկած իր հեռագրում Թալեաթը նշել է. «Անհրաժեշտ է, որ օգնություն տրամադրվի բոլոր նրանց, ովքեր մնացել են առանց խնամակալների ու առանց ողջ մնացած ազգականների. երեխաները տեղավորվեն որբանոցներում ու մուսուլմանական գյուղերում, որտեղ հայեր կամ օտարերկրացիներ չկան»[7]:

Օսմանյան կառավարությունը, չնայած պատերազմական վիճակին, իր նախաձեռնությամբ հայ որբերին հավաքում էր թուրքական որբանոցներում՝ իսլամացնելու ու թրքացնելու նպատակով: Այդ են վկայում ռազմական նախարար Էնվե-

---

3 *Bjørnlund M., "A Fate Worse Than Dying": Sexual Violence during* the *Armenian Genocide*, տե՛ս https://he.palgrave.com/resources/sample-chapters/9780230542532_sample.pdf, էջ 37:

4 Տե՛ս Akçam T., *The Young Turks' Crime Against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire*, Princeton University Press, 2012, էջ 317:

5 Նույն տեղում, էջ 322:

6 Անտոնյան Ա., *Մեծ ոճիրը*, Երևան, «Արևիկ», 1990, էջ 187:

7 Akçam T., *նշվ. աշխ.*, էջ 320:

րի՝ Թալեաթին ուղղված գրությունները, որտեղ հստակ ցուցումներ են տրվել հայ որբերին հատկապես թուրքական որբանոցներ ուղարկելու մասին:

Էնվերի՝ ներքին գործերի նախարարությանն ուղղված 1916 թ. մայիսի 9-ի գրության մեջ նշվում է. «Կրոնափոխ և ոչ կրոնափոխ հայ որբերին, եթե վերցնենք մեր որբանոցները, ես պատրաստ եմ ռազմական բյուջեից հոգալու դրա համար անհրաժեշտ ծախսերը»[8]:

Հայոց ցեղասպանության իրագործման համար կարևոր փաստաթուղթ է ներքին գործերի նախարարության ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման վարչության՝ 1916թ. ապրիլի 30-ին գրեթե բոլոր նահանգներ ուղարկված հեռագիրը, որի երրորդ և չորրորդ կետերը վերաբերում էին մինչև 12 տարեկան երեխաներին[9]:

Պետական շրջանակներում հայ երեխաներին թուրքական որբանոցներ վերցնելու շահագրգռվածությունը պայմանավորված էր նրանց իսլամացնելու և ձուլելու ցանկությամբ, քանի որ այդ տարիներին Օսմանյան կայսրության տարածքում գործում էին եվրոպական, ամերիկյան, միսիոներական որբանոցներ ևս:

Փաստորեն թուրքական կառավարությունը պետական հրամանների ու հեռագրերի միջոցով իրականացնում է հայ որբերի ձուլման հարցը: Երիտթուրք ղեկավարները, ինչքան աշխարհիկ, նույնքան էլ աթեիստ լինելով, հավատում էին, որ թրքացումը կարող է կառուցվել միայն իսլամացման հիմքի վրա[10]: Այս գործընթացը կատարվում էր փուլերով, համակարգված ու աստիճանաբար, որտեղ ներգրավված էին թուրք հասարակության բոլոր շերտերը:

բ. Հայ որբերի թրքացման քաղաքականությունը պետական որբանոցներում

Թուրքական որբանոցներ են բացվել Մերդինում, Ուրֆայում, Դիարբեքիրում, Կեսարիայում, Հալեպում, Բեյրութում, Անթուրայում և մի շարք այլ բնակավայրերում[11]: Հիմնական նպատակը թրքացումն էր, որը գրեթե բոլոր տեղերում իրագործվել է բռնությամբ, անվանափոխությամբ, մայրենի լեզվի արգելմամբ, կրոնափոխությամբ և մի շարք այլ ապօրինություններով, որոնց մասին կխոսվի արդեն յուրաքանչյուր որբանոցի պատմության շրջանակում:

Կառավարությունը թուրքական որբանոցներ բացելու գործընթացը սկսել է Հալեպից: 1915 թ. աշնանը որբերին հավաքել են քաղաքի արվարձաններից, փողոցներից, բայց ինչպես նշում է Ա. Անտոնյանը, դա ոչ թե գթասրտության, այլ վարա-

---

8 Մելքոնյան Ռ., *Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները*, Երևան, 2010, հեղինակային հրատարակություն, էջ 29:

9 Հեռագրի երրորդ կետում նշվում է, որ մինչև 12 տարեկան երեխաներին բաշխեն տեղական որբանոցներում ու կացարաններում, իսկ չորրորդ կետով կարգադրվում է, որ բավարար չափով որբանոցներ չլինելու պարագայում, տեղական սովորույթների համաձայն, երեխաների դաստիարակության և ձուլման նպատակով նրանց հանձնեն մուսուլմաններին (հեռագրի տեքստն ամբողջությամբ տե՛ս Akçam T., *նշվ. աշխ.*, էջ 323):

10 *Bjørnlund M., "A Fate Worse Than Dying"*: *Sexual Violence during* the *Armenian Genocide…*, էջ 37:

11 Եղիայեան Բ., *Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972*, Անթիլիաս, Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1975, էջ 97:

կիչ հիվանդությունները, մասնավորապես տիֆը քաղաքում կանխելու համար էր: Սակայն կառավարությունը մտավախություն ուներ, որ այսկերպ որբերը կարող են փրկվել, ուստի Հալեպի կուսակալություն է հասել Թալեաթի հետևյալ հրամանը. «Այս տեսակ որբանոցի մը պետք չկայ: ... Ղրկեցէք անապատները եւ իմացուցէք»[12]: Նոյեմբերի 26-ին Հալեպի գաղթականների ընդհանուր տեսչի փոխանորդ Աբդուլլահատ Նուրին հեռագրում է Կ. Պոլիս. «Որբանոցին մէջ աւելի քան 400 տղաք կը գտնուին. ասոնք ալ կարաւաններուն ընկերացնելով իրենց տարագրության վայրերը պիտի ղրկուին»[13]:

Սակայն Հալեպի իշխանություններն «ահավոր պատուհաս» էին գտել այդ երեխաների համար՝ որբանոցի տեսուչ նշանակելով Նազմիին, ով «սիսթէմաթիք անգթութեամբ մը, անօթութեամբ ու չարչարանքներով, կը սպաննէր որբերը նոյն իսկ քաղքին մէջ»[14]: Անգլիացիների՝ Հալեպ մտնելուց հետո հայոց առաջնորդարանի բողոքների հիման վրա նա ձերբակալվում է: Հարցաքննության ընթացքում պարզ է դառնում, որ իր պաշտոնավարության ժամանակ որբանոց են տարվել 3000 որբեր, որոնցից ողջ էին մնացել միայն 50-ը: Այդ կապակցությամբ Նազմին հայտարարել է, որ դիտմամբ է արել, «որպէս զի այս շենքը արդարացնէ իր որբանոց անունը ... ու մանաւանդ, ինք շարունակէ ստանալ իր տեսչի ամսականն ու պարէնը»[15]:

Գերմանացի հասարակական գործիչ, միսիոներ Յո. Լեփսիուսն իր «Գերմանիան ու Հայաստանը 1914-1918 թթ.» գրքում անդրադառնում է թուրքական որբանոցների խնդրին՝ գրելով. «Հալեպում մի գերմանական որբանոց թողեցին ... մնացած որբանոցների մասին հոգ էին տանում գերմանական բուժքույրերը, որոնք վերահսկվում էին թուրքական կառավարության կողմից, հետագայում նույնպես աքսորվեցին: Որբանոցի հայ երեխաներին տեղաբաշխեցին Դամասկոսի, Կոնիայի, Իզմիրի և այլ մուսուլմանական «կառավարական որբանոցներում», որտեղ նրանք կրում էին մահմեդական անուններ և դաստիարակվում միայն մահմեդական վարքով»[16]:

1916թ. հունվարի 23-ի հեռագրում կրկնվում է 1915թ. դեկտեմբերի 12-ի պահանջը՝ «... (հայոց) պզտիկներուն սնուցման համար աւելորդ ծախքեր ընելը յարմար չէ: Ատոնք տարագրութեան կարաւաններուն ընկերացնելով, վիլայէթէն դուրս հանել եւ մինչ հիմայ սնուցուողներն ալ՝ մեր վերջին զեկուցման համեմատ՝ Սվազ ղրկել»[17]:

Թուրքական կողմը սկսում է Հալեպի մի շարք որբանոցների, մասնավորապես Հայոց առաջնորդարանի որբանոցի երեխաներին կենտրոնացնել Մեսքենեում՝ Սեբաստիա ուղարկելու նպատակով: Իր քաղաքականությունն իրագործելու համար կառավարությունն ընտրել էր Սեբաստիան ու Կոնիան: Հալեպում հայ գաղթականների տեղահանության տեսչության գլխավոր քարտուղար Նայիմ բեյն

---

12 Անտոնյան Ա., *նշվ. աշխ.*, էջ 183:

13 Նույն տեղում, էջ 183-185:

14 Նույն տեղում, էջ 185:

15 Նույն տեղում:

16 *Deutschland und Armenia 1914-1918…*, էջ XL:

17 Անտոնյան Ա., *նշվ. աշխ.*, էջ 189:

այս կապակցությամբ գրում է. «Որբերը Սվազ ղրկելու նպատակը զանոնք սպանելն էր»[18]: Սակայն հետագայում որոշումը փոխվում է, ու նրանց հիմնականում ուղարկում են Կ. Պոլսի թուրքական որբանոցներ: 1916թ. օգոստոսի 29-ին Հալեպում Գերմանիայի հյուպատոսն ամփոփել է շվեյցարական, ամերիկյան ու գերմանական լուծարված որբանոցների՝ 800-ի հասնող որբերի ճակատագիրը: Տեղական կառավարությունը հատուկ հանձնակատար է նշանակել այս որբանոցների համար, որը պետք է իրականացներ նրանց փոխանցումը Թուրքիայի կառավարմանը[19]:

1916 թ. սեպտեմբերի 5-ին Հալեպի հյուպատոսարանից տեղեկացնում են Դեր-Զորում տեղակայված որբ երեխաների վերաբերյալ. «Զոհված աքսորյալ երեխաների խնդիրը մինչ օրս չի լուծվել: Տեղի աքսորման հանձնաժողովի ներկայացուցիչը ղեկավարող բուժքրոջ հետ հայտարարեց, որ այս որբերը գնալու են Կոնիայի ազգային որբանոց. այնտեղ նրանք կկրեն թուրքական անուններ և կդաստիարակվեն թուրքական ոգով»[20]:

1917 թ. փետրվարի 14-ին Հալեպում Գերմանիայի հյուպատոս Ռյոսլերը գրում է Բեռլին՝ Ռայխկանցլերին. «Հալեպի կառավարությունը Ջեմալ փաշայի հրամանով բուժքույր Բեատրիս Ռոհների որբանոցից 70 տղա վերցրեց, որպեսզի նրանց Լիբանանի կառավարական որբանոցը տեղափոխի, որտեղ նրանք Արևելյան Անատոլիայից եկած փախստական մահմեդական երեխաների հետ պետք է դաստիարակվեն: Հետագայում նմանատիպ բաշխումներ որբանոցներում հաշվի կառնեն: Այսպիսով, նման եղանակով հայերը կդառնան հայրենասեր օսմաններ, և ինչպես բացահայտ, այնպես էլ ծածուկ կերպով նախադրյալներ են ստեղծվում մահմեդականներ դառնալու: Կառավարական որբանոցներ գնացող բազմաթիվ հայ տղաներ հավանաբար կփախչեն, մնացածին էլ եթե իսլամ չընդունեն, փողոց կնետեն: Շատ քչերն այնտեղ կմեծանան»[21]: Որպես այս գործողությունների հետևանք՝ հյուպատոսը եզրակացնում է. «Կառավարական որբանոցներում երեխաների նպատակադրված բաշխումը ոչ մի դրական արդյունքի չհանգեցրեց, միայն հայ որբ տղաների թիվը դարձյալ նվազեց»[22]:

Շվեյցարացի միսիոներ Յակոբ Կյունցլերը Ուրֆայում կառավարության կողմից որբանոցի հիմնումը բնորոշում է որպես թուրքական «գթասրտության» դրսևո-

---

18 Նույն տեղում, էջ 190:

19 Կայսերական հյուպատոսարանի աշխատակից Հոֆմանը Հալեպից հաղորդում է Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը, որ հայ երեխաների համար կիրառվելու են հետևյալ սկզբունքները. 13-ից բարձր տարիքի տղաները հեռացվելու էին, 13-ից բարձր տարիք ունեցող աղջիկներն ամուսնանալու էին մուսուլմանների հետ, 10-12 տարեկան երեխաները, ովքեր դեռ իրենց հետ կատարվածի տպավորությունների տակ էին, պետք է թուրքական որբանոցներում որևէ արհեստ սովորեին, իսկ 10 տարեկանից ցածր տարիք ունեցող երեխաներն էլ պետք է մեծանային հատուկ որբանոցներում (տե՛ս *Deutschland und Armenia 1914-1918, Sammlung diplomatischer Aktentücke, herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius*, Donnat Temmen Verlag, Bremen, 1986, էջ 290-291):

20 Նույն տեղում, էջ 293:

21 Նույն տեղում, էջ 319:

22 Նույն տեղում:

րում: «Երբ ճամբարներում, որտեղ կուտակվել էին հայ երեխաներ, անհամար ծնողազուրկ երեխաներ լաց էին լինում ու ճչում, կառավարությունը որոշեց բացել մի թուրքական որբանոց»[23]: Ճամբարներից, փողոցներից վերցրել են մոտ հազար երեխա: Խնամակալուհիներ են եղել հայերը, քանի որ թուրք կանայք հրաժարվել են: Հավաքել են նաև ծծկեր երեխաներին, և քանի որ նրանց համար պետք էին նաև ստնտուներ, որոշ ուրֆացի կանայք հնարավորություն են ունեցել քաղաքում մնալու: Կյունցլերի տեղեկությունների համաձայն՝ այս որբանոցում մահացության թիվը շատ բարձր է եղել: Կես տարվա ընթացքում 1000 որբերից կենդանի էր մնացել միայն 200-ը: Կառավարության ցուցումով այդտեղ նույնպես երեխաներին իսլամական անուններ են տրվել, համեմատաբար մեծ տարիքի երեխաներին էլ իսլամ են ուսուցանել: 1917-1918 թթ. ձմռանը շատ երեխաներ հեռացվել են որբանոցից: Միայն նա, ով հույս էր ներշնչում, որ հետագայում լավ մուսուլման կլինի, կարողացավ մնալ և տեղավորվել դեռևս նախապատերազմյան շրջանից գործող արհեստագործական դպրոցում: Արդեն 1918 թ. դեկտեմբերին կառավարությունը ստիպված վերջին 20 հոգուն ազատ է արձակել[24]:

Ադանայի թուրքական որբանոցներում հայ որբերի խնդիրներին է անդրադառնում Գերմանիայի հյուպատոս Օյգեն Բյուգեն, ով 1915 թ. հոկտեմբերի 21-ին հաղորդում է. «Թուրքական որբանոցի տնօրենը սաներին բացատրել է, որ նրանք կամ իրենց դավանանքը կփոխեն կամ հարկադրված կլինեն լքել որբանոցը: Աղջիկների և տղաների մեծ մասը հեռացան որբանոցից, իսկ մնացած 14 տղաները, հավանաբար, իսլամացան: Տնօրենը երեխաներին բացատրել է, որ թուրքական որբանոցում քրիստոնեությունը տեղ չունի, անգամ աղոթելն արգելվելու է»[25]:

Արմաշում նույնպես գործել է թուրքական որբանոց, որի մասին տեղեկանում ենք Հալեպի ազգային արխիվում պահվող նամակներից[26]: Նամակներից մեկից հայտնի է դառնում, որ մոտ 200-250 որբերի Հալեպից, մասնավորապես Ա. Շիրաճյանի որբանոցից Կ. Պոլիս տեղափոխելու հրահանգ է տրվել: Որոշ ժամանակ անց հայտնի է դարձել, որ տղաներին տարել են Արմաշի դպրեվանք «եւ հոն իսլամութիւն ընդունողները դրած են Արմաշի այդ վանքին մէջ, անոնց կերակրելով ու թուրքերէն դասեր տալով»[27]: Եպիսկոպոս Արտավազդ Սյուրմեյանին ուղղված մեկ այլ նամակից տեղեկանում ենք, որ Ահարոն Պատվելիի որբանոցից մոտ 400 տղաներ՝ 8-14 տարեկան, տեղափոխվել են Կ. Պոլիս: «Հոն թրքացնելու համար որբանոց մը

---

[23] Կյունցլեր Ց., *Արյան և արցունքների երկրում, իրադարձությունները Միջագետքում Համաշխարհային պատերազմի ժամանակ (1914-1918)*, Երևան, ՀՑԹԻ, 2011, էջ 66:

[24] Նույն տեղում, էջ 66-67:

[25] *Deutschland und Armenia 1914-1918…*, էջ 209:

[26] Ցեղասպանությանն ու դրան հաջորդող տարիներին բազմաթիվ նամակներ էին հասնում Հալեպի հայոց առաջնորդարան, որտեղ վերապրողները փնտրում էին իրենց հարազատներին: Նամակներում նրանք որոշակի մանրամասներ էին տալիս ու ակնկալում որևէ տեղեկություն ստանալ նրանց մասին: Երբեմն այդ տեղեկությունները տպվում էին մամուլում, երբեմն հայտարարվում էին եկեղեցու բեմից կամ էլ հանրային վայրերում էին փակցվում: Այնուհետև առաջնորդարանը որոնման արդյունքների մասին տեղեկացնում էր նամակի տիրոջը:

[27] Մինասեան Մ., *Սպասելով Ձեր պատասխանին…* , «Երթ», հ. 2, Հալէպ, Արեւելք, 2006, էջ 203:

բացուեցաւ եւ այդ տղա(ք)ները հոն մնացին մինչեւ պատերազմին վերջը որոնցմէ ողջ մնացողներ շատ եղած են»[28]: Արմաշի թուրքական որբանոցի մասին տեղեկանում ենք նաև Զավեն պատրիարքի հուշերից, որտեղ նշվում է, որ Արմաշի Զարխափան Ս. Աստվածածին վանքի վանահայրը, միաբանները, ուսուցիչները 1915 թ. տարագրվել են Կոնիա, իսկ վանքը կողոպտվել է, ու գավառի համար թուրքական կառավարության կողմից երկրորդական վարժարան է հիմնադրվել[29]:

Սեբաստիայի տարագրության սկզբնական ժամանակահատվածում հայ երեխաներին ու պատանիներին հավաքել ու Մալաթիայի թուրքական որբանոց են տեղափոխել, սակայն 1916 թ. վերջերին արդեն Պոլսից ստացված նոր հրամանի համաձայն՝ նրանց էլ տարել ու սպանել են[30]:

1914-17թթ. Խարբերդում ԱՄՆ-ի հյուպատոս Լեսլի Դևիսը 1915թ. հուլիսի 10-ին տեղում որբանոց բացելու խնդրով դիմում է նահանգապետին, բայց կտրուկ մերժում է ստանում: Վերջինս տեղեկացնում է, որ կառավարությունն է պատրաստվում մանկատներ բացել[31]: Լ. Դևիսը նշում է, որ, իրոք, կառավարությունը մի շարք որբանոցներ է հիմնում և որոշ ժամանակ պատսպարում այդ որբերին, այնուհետև հավելում. «Հետո բոլորն էլ անհետացան և լուր տարածվեց, որ նրանց տարել են Խարբերդից քսան մղոն հեռու գտնվող մի լիճ, խեղդամահ արել»[32]:

Անթուրայի որբանոցը[33] կառավարության հիմնած թուրքական որբանոցներից ամենամեծն էր, որը, դատելով մանկական հուշագրություններից, ականատեսների վկայություններից ամենադաժանն էր իր բարքերով, կիրառվող պատժամիջոցներով ու թրքացմանն ուղղված իր հետևողական գործողություններով: Որբանոցի հիմնադրման ու որբահավաք աշխատանքներով հիմնականում զբաղվում էր Զեմալ փաշան: Նրա նախաձեռնությամբ Անթուրայի նախկին ֆրանսիական ճիզվիտական մենաստանում բացված որբանոցի աշխատանքներն իրականացնելու համար հատուկ Կ. Պոլսից Սիրիա և Լիբանան է հրավիրվում պանթուրքական գաղափարների կողմնակից, գրող Հալիդե Էդիպը[34], ով, տեղում ուսումնասիրե-

---

28 Նույն տեղում, էջ 204:

29 Զաւէն Արք., *Պատրիարքական յուշերս, վաւերագիրներ եւ վկայութիւններ*, 1947, «Նոր Աստղ», Գահիրէ, էջ 286:

30 *«Պատմագիրք յուշամատեան Սեբաստիոյ եւ գաւառի հայութեան»*, կազմեց՝ Առաքել Ն. Պատրիկ, Պէյրութ, 1974, «Մշակ», էջ 752:

31 Լեսլի Դ., *Սպանդի նահանգը*, Երևան, 2001, «Դալլ», էջ 134:

32 Նույն տեղում, էջ 135:

33 Անթուրայի որբանոցի շուրջ 2000 հայ երեխաներից միայն 650-ն են վերապրել (տե՛ս Եղիայեան Բ., *Ժամանակակից պատմութիւն…*, էջ 250):

34 Հալիդե խանումը (Հալիդե Էդիպ Ադիվար, 1884-1964 թթ.) եղել է Թուրքիայում իր ժամանակի ֆեմինիստական շարժման հայտնի ակտիվիստ: 1901 թ. հաճախել է կանանց ամերիկյան քոլեջ և ճանաչված է եղել որպես վիպագիր: Նրա գրքերում քննադատության է ենթարկվել կանանց ցածր սոցիալական վիճակը Թուրքիայում: Նրա առաջին՝ *"Seviye Talip"* վեպը հրատարակվել է 1909 թվականին: Ապրել է Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում և ԱՄՆ-ում: Հալիդեն աջակցել է այն փաշաներին, ովքեր ծրագրել, կազմակերպել և իրականացրել են հայերի ցեղասպանությունը, իսկ հետագայում Նիգյար խանումի ընկերակցությամբ կարևոր դեր է խաղացել ողջ մնացած որբերին թրքացնելու գործում:

լով իրավիճակը, Նիգյար խանումի հետ պետք է զբաղվեր որբանոցների կրթական ու կազմակերպչական հարցերով: 1916 թ. ամռանը Հալիդեն արդեն Սիրիայում էր: Հետագայում իր "*Memoirs of Halide Edip*" հուշագրության մեջ նա պատմում է ժամանակի դեպքերն ու տալիս որբանոցի, Սիրիայում ու Լիբանանում թրքացման քաղաքականությունն իրականացնելու վերաբերյալ իր մեկնաբանություններն ու վերաբերմունքը: Գրքում տեղ գտած մանրամասներն իրենց բնույթով խիստ տարբերվում են իրականությունից: Հիմք ընդունելով մանկական հուշագրությունները, ականատեսների պատմությունները՝ կարելի է եզրակացնել, որ Հալիդե Էդիպի հուշագրությունը հիմնականում իր և իր կողմնակիցների գործունեությունն արդարացնող փորձ է:

գ. Թուրքական որբանոցներում կիրառվող մեթոդները

Ինչպես նշեցինք, թուրքական որբանոց մտնելու առաջին պարտադիր պայմանն անվանափոխությունն էր: Իրենց հուշագրություններում դրա մասին են հիշատակում գրեթե բոլոր որբերը:

Անթուրայի որբանոցում շուրջ երեքուկես տարի անցկացրած Գառնիկ Բանյանն[35] իր հուշերում պատմում է, որ որբանոցում նրան տրվում են 549 թիվը և Ահմեդ անունը: Իսկ մի անգամ, երբ մոռանում է իր թուրքական անունը, տնօրենի կողմից խիստ պատժվում է՝ դաժանորեն ծեծի ենթարկվելով: «Երկու օր վերջ իմացայ, գտնուած տեղս հիւանդանոցն էր եւ ես որբանոցի առաջին հիւանդն էի, առաջին զոհը թրքացման ճամբուն վրայ»[36]:

Անթուրայի որբանոցի սան է եղել նաև Մելգոն Պետրոսյանը[37], ով, երկար ու դաժան տարագրության ճանապարհին անցնելուց հետո, միայն առաջին տպավորությամբ գրում է. «Անթուրա ... հրաշալի տեսքով դրախտավայր, տեսակ մը ոսկիէ վանդակ մէզի համար ... երկրէն ասդին առաջին անգամ ըլլալով հանգիստ քուն մը քաշեցինք ... Եթէ այսպէս շարունակուէր, փրկուած էինք»[38]: Հաջորդ օրերին արդեն իրավիճակը փոխվում է. «Հայտարարում են, որ այն որ հաքք տինը (թուրք հաւատքը) կ'ընդունի, պէտք է նոր անուն ընտրէ ու արձանագրուի: Անոնք կէսօրին մասնաւոր միսով ճաշ, հաց ուզածին չափ պիտի ուտեն եւ այլն: Ուրեմն իսլամները հանըմ եւ էֆենտի ուտելէն վերջ կեավուրները պիտի ուտեն ... Միսին հոտը առինք մաս մը արձանագրուեցան»[39]: Բացի դրանից տնօրենության կարգադրությամբ

---

[35] Գառնիկ Բանյանը ծնվել է Կյուրին քաղաքում 1910 թ.: Ցեղասպանության տարիներին տարագրվել է սիրիական անապատներ: Կարճ ժամանակահատված մնացել է Համայի որբանոցում, իսկ Ջեմալ փաշայի հրամանից հետո իր հետ եղած որբերի հետ տեղափոխվել է Անթուրա:

[36] Բանեան Գ., *Յուշեր մանկութեան եւ որբութեան*, Անթիլիաս, Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1992, էջ 137:

[37] Մելգոն Պետրոսյանը ծնվել է 1906 թ. Մարաշի մոտակայքում գտնվող Սարըլար գյուղում: Տարագրության դաժան ճանապարհներով քույրերի հետ հասել է Անթուրա, որտեղից փախուստի է դիմել 1918 թ. ապրիլին: Նրա ձեռագիր հուշերը՝ «Յուշեր Եղեռնի օրերէն, 1905-1918», պահվում են ՀՑԹԻ-ի գիտական ֆոնդերում:

[38] ՀՑԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ. հ. 231, թպ. 148, էջ 12:

[39] Նույն տեղում, էջ 13:

ուտողներն իրենց կերածի մասին պիտի պատմեին մյուսներին: Որբանոցի ղեկավարությունը չի սպասում Մելգոնի ու նրա 15 համագյուղացի երեխաների համաձայնությանը. «եկան խարազաններով տարին մեզի... թաց աչքերով մեյմէկ անուն որոշեցինք... եղայ Նէժիպ, թիւս ութ»:[40]

Նորեկներին բաժանում էին ըստ դասարանների, տասնապետ նշանակում, ով հսկում էր իր խմբին, սխալ բան անելու համար նրանք կարող էին նաև ապտակել: Օրական մի քանի ժամ մարզանք էին անում զինվորական ձևով: Ցանկացած սխալ քայլ դատապարտվում էր ծեծի[41]:

Հարություն Ալբոյաջյանը[42] երկու անգամ է անվանափոխվել: Առաջին անգամ Դերայում[43], այնուհետև՝ Անթուրայում, որտեղ ստացել է Շյուքրու անունը և 534 համարը[44]:

Խորեն Գրլրճեանին[45] Հալեպից տանում են Կ. Պոլսի «Հարբիյե» զինվորական կենտրոնական դպրոց: Այստեղ բոլորին պղնձե կնիքներ են տալիս՝ իրենց նոր թուրքական անունով: Նա ստանում է «Ալի օղլու իսլամ» անունով կնիքը, որը տնօրենության կարգադրությամբ միշտ պետք է վզից կախված լիներ»[46]: Նման իրավիճակում հայտնվելու կապակցությամբ նա գրում է. «Մեր յանցանքը հայ ըլլալն էր: Իսկ այսուհետեւ թիւրքին պատկանելով, մեզի թիւրք կը ճանչնան եւ ամէն միջոցի կը դիմեն... պիտի յաջողին մեզ թրքացնել եւ մեր ծնողները մոռցնել տալ»[47]:

Մարդինի երկսեռ թուրքական որբանոցի անվանափոխության արարողակարգից դրվագներ է ներկայացնում Մարի Գրիգորյանը[48]: «Թրքական անուններու ցանկին մէջէն ինծի վիճակուեցաւ Այիշե անունը ... ամէնուս համար ինքնութեան թուղթեր շինուեցան, ուր առանց բացառութեան բոլորիս հայրերը կոչուեցան Ապտուլլահ, իսկ մայրերը՝ Սալիհէ...»[49]: Որբանոցում նրանց անվանում էին մուհ-

---

40 Նույն տեղում, էջ 14:

41 Նույն տեղում, էջ 12:

42 Հ. Ալբոյաջյանը ծնվել է 1904 թ. Մարաշի շրջանի Ֆընտըճագ գյուղում: Թուրքական կողմի կազմակերպած որբահավաքի արդյունքում նա Դամասկոսից տեղափոխվել է Անթուրա:

43 Հ. Ալբոյաջյանի տեղեկությունների համաձայն՝ 1916թ. սկզբներին Դերայում՝ վրանների տակ, նույնպես եղել է թուրքական որբանոց, որտեղ եղել են մոտ 200 երեխաներ, որոնց մի քանի թուրք պաշտոնյաներ նոր թուրքական անուններ են տվել: Նրան անվանակոչել են Սալեհ (տե՛ս Ալբոյաճյան Հ., *Խաչելության ճամփաներով*, Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2005, էջ 36):

44 Ալբոյաջյան Հ., *նշվ. աշխ.*, էջ 40:

45 Խորեն Գրլրճյանը ծնվել է 1910 թ. Էվերեկում, աքսորվել է Ռաքքայի և Դեր-Զորի կողմերը: Նրա ձեռագիր հուշերը՝ «Վերապրող որբի մը յուշերը» խորագրով, պահվում են ՀՑԹԻ-ի գիտական ֆոնդերում:

46 ՀՑԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ. հ. 44, թպ. 42, էջ 23:

47 Նույն տեղում, էջ 22:

48 Մարի Գրիգորյան-Մարտիրոսյանը ծնվել է Ադանայում, վաղ մանկության տարիներին ականատես է եղել Ադանայի կոտորածներին, հետո էլ 1915 թ. տարագրվել է Հալեպ, Ռաս ուլ-Այն: Ծնողների մահից հետո նրան որբահավաք կազմակերպող մարմինները տեղափոխել են Մարդինի թուրքական որբանոց, որտեղ մնացել է շուրջ երեք տարի: Ձեռագիրը վերնագրված է «Ատանայէն Մարտինի թրքական որբանոցը (1908-1918)»:

49 ՀՑԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, թպ. 248, ֆ. հ. 397, էջ 72:

դետի[50], գյավուր բառը խստիվ արգելված էր[51]: Ապրելով որբանոցային սահմանափակ առօրյան՝ հեղինակը գրում է. «Այսպէս նետուած հսկայ ձուլարանին մէջ, իւրաքանչիւր տղայ պետք էր մոռնար իր ինքնութիւնը եւ դառնար իսկական թիւրք քաղաքացի»[52]:

Ադանայի որբանոցում շուրջ վեց տարի անցկացրած Երվանդ Փոստալջյանն[53] իր հուշերում[54] պատմում է, որ տնօրեն Վահագն Տաթևյանի կալանավորվելուց հետո հայությունն իսպառ վերանում է որբանոցից: Նրանց տասնյակներով կանչում էին ու առաջարկում թուրք լինել, անունն ու կրոնը փոխել: Նրան անվանակոչում են Մեհմեդ Օղլի, համար տալիս: Անվանափոխության կապակցությամբ Երվանդը գրում է. «Մենք՝ որբերս մեր անունները չմոռանալու համար, թղթերի վրա գրված մեզ վրա էինք պահում: ...Որբանոցում կային իրենց անունն ու դավանանքը չփոխածներ: Նրանց տանում էին ներքևի հարկ, ծեծից մեռած դիակներ էին ցույց տալիս ու ասում. «Եթե թուրք չլինեք, ձեզ էլ այդպես շանսատակ կանենք»[55]:

Համբարձում Չիթճեանը[56] նույնպես առաջին օրն ևեթ ստացել է Ռուշդի անունը, ստիպել են մոռանալ մայրենի լեզուն, դասի ժամանակ ազգայնական գաղափարներ են փորձել քարոզել՝ «...ազատություն, արդարություն, հավասարություն, մահ հանուն մեկ հայրենիքի, քանի որ օսմանցի ենք, օսմանցի եղբայրներ ենք» և նմանատիպ այլ կարգախոսներով[57]:

Մինչդեռ Ջեմալ փաշան անվանափոխության երևույթը լրիվ այլ երանգավորմամբ է ներկայացրել: 1916 թ. սեպտեմբերին Հալիդե Էդիպը Ջեմալի հետ ունեցած զրույցի ժամանակ անվանափոխության հարցի առնչությամբ արտահայտվել է, թե «դա նման է կրոնափոխության», որին հետևել է Ջեմալի պարզաբանումը, որ ինքը ստիպված է դա անում, քանի որ այլևս գումարներ չկան՝ հայկական որբանոց հիմնելու համար ... Սա իսլամական որբանոց է և միայն մուսուլման երեխաներին է

---

50 Մուհդետի՝ նորադարձ, որբանոցներում այսպես են անվանել նոր իսլամ ընդունած երեխաներին:

51 ՀՑԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, թպ. 248, ֆ. հ. 397, էջ 72:

52 ՀՑԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, թպ. 248, ֆ. հ. 397, էջ 74-75:

53 Երվանդ Փոստալջյանը ծնվել է 1903 թ. Հաճընն քաղաքում: Հայրը զոհվել է Հաճընի 1909 թ. ինքնապաշտպանական մարտերի ժամանակ: Շուրջ 230 երեխաների քարավանի հետ նա անցել է Ադանա, որտեղ նրանց խնամատարությունը ստանձնել է Վահագն Տաթևյանը (1875-1916): Շուրջ 1600 որբեր ապաստանել են Քարդա որբանոցում, որը վերանվանել է Ջեմալ փաշայի անունով: 1915 թ. փետրվարին թուրքական կառավարության հրամանով Վահագն հայրիկին ու 32 հայ ուսուցիչների բանտարկել են, որից հետո որբանոցի ղեկավարումն անցել է թուրքական կողմին:

54 Նրա ձեռագիր հուշերը՝ «Կիլիկիայի 1600 որբերից մեկի՝ Երվանդ Փոստալջյանի ճակատագիրը» խորագրով, պահվում են ՀՑԹԻ-ի գիտական ֆոնդերում:

55 ՀՑԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, թպ. 93, ֆ. հ. 4164, էջ14:

56 Համբարձում Չիթճեանը ծնվել է 1901 թ. Չարսանջակ գավառակի Իսմայիլ գյուղում: Իր երեք եղբայրների հետ հայտնվել է թուրքական «մեքթեպ»-ում, որտեղ կառավարությունը կենտրոնացրել էր 4-14 տարեկան շուրջ 150-200 տղաների:

57 Չիթճեան Հ., *Մազի չափ մահին մոտ*, London and Reading, 2004,Taderon Press, էջ 91:

թույլատրվում, իսկ Անթուրայի որբանոցը նախատեսված էր միայն թուրք երեխաների համար[58]:

Թուրքական որբանոցներում գործել է պատժամիջոցների մի ամբողջ ցանկ: Սա ևս մեկ անգամ փաստում է, որ կրոնափոխությունն ու անվանափոխությունն իրականացվել են բռնի միջոցներով: Հուշագիրները նկարագրել են որբանոցներում կիրառվող պատժամիջոցները, որոնց ենթարկվել են նաև իրենք: Անթուրայում կիրառվող խիստ պատժամիջոցներից էր ֆալախան[59]: Գ. Բանյանը նկարագրում է, թե ինչպես է ենթարկվել ֆալախայի, երբ մի օր հայերեն «բառ մը դուրս թռաւ բերնէս ... մատնող եղեր էր եւ նոյն իրիկունը պառկեցայ ֆալախայի հարուածներուն տակ: Դեռ հինգ տարիքս չէի լրացուած»[60]:

Այսպես, երկու տարի շարունակ, ամեն մայրամուտի, որբերի սիրտը կծկվում էր, մղձավանջով լցվում... դրոշի արարողությունից հետո մոտ հազար տղաներ ակամատես ու վկա էին դառնում ֆալախայի արարողությանը[61]:

Հ. Ալբոյաճյանը նույնպես անդրադարձ է կատարել Անթուրայում կիրառվող պատժամիջոցներին՝ ընդլայնելով ցուցակը. «Եթե որևէ մեկը հայերեն էր խոսում... նրան խիստ պատժում էին: Կամ ծեծում էին կամ ստիպում ճաշարանի կտուրին կանգնել ու երեք-չորս ժամ արևին նայել: Ամենածանր պատիժը ֆալախան[62] էր»[63]: Գ. Բանյանը նույնպես հիշում է, որ իրենց որբերից Աբրահամը որպես պատիժ երկու օր մինչ արևի մայր մտնելը վերակացուի հսկողության տակ նայել է արևի կիզիչ ճառագայթներին[64]: Հաճախ որբանոցից անտառ ուտելիքի համար փախչող երեխաներին էլ 24 ժամ բանտարկում էին ու ոչինչ չէին տալիս ուտելու՝ ճաշի ժամին բոլորի ներկայությամբ ենթարկելով ֆալախայի: Անգամ որբանոցի մյուդիրներից Ռաշիդ բեյը նոր ու ավելի դաժան պատժամիջոց է հնարում կարգազանց երեխաներին պատժելու, բայց նրա «հորինած» պատժին ոչ ոք «չարժանացավ»[65]: Ֆալախայի կիրառման համար որբանոցում գործել է հստակ «ուղեցույց», որտեղ նշվել է, թե որ «հանցագործության» դեպքում քանի անգամ պետք է ֆալախայի ենթար-

---

58 *Memoirs of Halide Edip…*, էջ 428-429:

59 Արտավազդ արք. Սուրմեյանն անդրադարձել է ֆալախայի՝ որպես պատժամիջոցի գործադրմանը, համաձայն որի. «Գողութիւնը կը պատժուի երբեմն ձեռքը կտրելով, բայց հաճախ գաւազանի ծեծով՝ որ աւելի թեթեւ յանցանքներու պատիժն է: Ֆալախայ է գործածուած ձեւը»: Այս տեղեկությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ֆալախան որպես պատժամիջոց չի ստեղծվել որբանոցների համար, այն ուղղակի վերցվել է իսլամական պատժամիջոցների ցանկից: Տե՛ս Սիւրմէեան արք. Ա., *Պատմութիւն Հալէպի Հայոց*, Հալէպ, Կիլիկիա, 2006, հ. Բ, էջ 509:

60 Բանեան Գ., *նշվ. աշխ.*, էջ 159:

61 Նույն տեղում, էջ 158:

62 Ֆալախայի ժամանակ փայտի ծայրերին ամրացնում են ոչ ձիգ պարան, պատիժը կրողի ոտքերն անցկացնում են փայտի և պարանի միջև, հետո սկսում են փայտը պտտեցնել, իսկ երրորդ անձը ձեռքի գավազանով խփում է պատժվողի ոտքերին, մինչև ոտքերից արյուն գալը (մանրամասն տե՛ս Ալբոյաջյան Հ., *նշվ. աշխ.*, էջ 44):

63 Ալբոյաջյան Հ., *նշվ. աշխ.*, էջ 44-45:

64 Բանեան Գ., *նշվ. աշխ.*, էջ 186:

65 Նույն տեղում, էջ 45:

կել[66]: Դասերն ընթացել են նախատինքների, վիրավորական խոսքերի, պատի տակ դրված ծանր քարերի, դռան հետևում դրված տարբեր չափերի գավազանների, ֆալախայի գործիքի առկայությամբ[67]:

Թուրքական «մանկավարժությունը» կիրառել է հնարավոր բոլոր ձևերը. «Բան մը բաց ձգված չէր: Գործադրուած էր ինչ որ թուրքական ուղեղը կրնար յղանալ»[68]: Իսկ Հալիդե Էդիպը որբանոցի կարգուկանոնին նայում էր մեծ խանդավառությամբ: Նա վստահ էր, որ մի քանի տարի հետո թրքացած որբերը պիտի ազնվացնեին թուրք արյունը[69]:

Մարդինի որբանոցում դասընթացի ժամանակ աղմուկը պատճառ էր դառնում, որ ուսուցչուհին «օրհնյալ գավազանով» ծեծի երեխաներին, հետո էլ դաժան ցրտին բակ դուրս բերի՝ անունները կարդալու համար[70]:

Նման որբանոցներում պարտադիր էին նաև իսլամի դասերը: Մելգոն Պետրոսյանն իր հուշագրությունում մի քանի դրվագներ է բերում այդ դասերից: Ֆեյզի փաշան քրիստոնեության մասին խոսելիս նշել է. «...ձագուկներս, ձեր կրոնը հինցած է ինչպէս կրակապաշտութիւնը, նոյնպէս ձեր Յիսուս մարգարէն հինցած է, շապիկ մը որ հիննայ կը նետէն, նորը կը հագնին»[71]: Երեխաների հուզմունքը լացի է վերածվել, երբ նա շարունակելով ասել է. «Մուհամմէտ մարգարէին կրօնքը ամէնէն շիտակն է, պէտք է այդ կրօնքը ընդունիք»[72]:

Մարդինի որբանոցում իսլամի դասերին պարտադիր հատվածներ են սովորել Ղուրանից, դրան զուգահեռ սովորել են նաև իսլամական օրենքների համաձայն լվացվել ու նամազ անել: Ամեն օր կրոնի դասերին նրանց շարք են կանգնեցրել՝ նամազ անելու: Ծնկի գալու պահին ամեն անգամ ծիծաղի ալիք էր բարձրանում, սաստելն ու խրատելն անօգուտ էին դառնում: Արդյունքում կրոնի դասերի ցանկից նամազը հանվում է[73]:

Որբանոցներում պարտադիր պայմաններից է եղել նաև թլպատումը: Եթե երեխաներն անվանափոխության կամ իսլամ ընդունելու փաստն ինչ-որ կերպ ընդունում էին ու համակերպվում՝ թեկուզ առերես, ապա թլպատման արարողակարգին նրանք ամենաշատն էին ընդդիմանում: Որբանոցներում, երբ այդ մասին լուրեր էին տարածվում, տղաներից շատերը փախուստի էին դիմում: Հ. Ալբոյաճյանը գրում է. «Լուր տարածվեց, թե այդ մարդիկ եկել են որբերին թլպատելու: Որբերը, իմանալով այդ մասին, սկսեցին որբանոցից անհետանալ, ով ուր կարող էր»[74]:

---

66 Բանեան Գ., *նշվ. աշխ.*, էջ 157:

67 Նույն տեղում, էջ 153-154:

68 Նույն տեղում, էջ 162-163:

69 Նույն տեղում, էջ 168:

70 ՀՑԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ.հ. 397, թպ. 248, էջ 81:

71 ՀՑԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ. հ. 231, թպ. 148, էջ 13:

72 Նույն տեղում, էջ 13:

73 ՀՑԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ. հ. 397, թպ. 248, էջ 79:

74 Ալբոյաջյան Հ., *նշվ. աշխ.*, էջ 43:

Ադանայի որբանոցի սան Երվանդ Փոստալջյանն իր հուշերում գրում է, որ որբանոցի տնօրենը թերթում հայտարարություն է տվել ու թուրք հավատացյալներին որբանոցի հայ երեխաների թլպատման արարողությանը ներկա գտնվելու կոչ արել: Երվանդ Փոստալջյանն իր հուշերում գրում է. «Գալիս էին թուրք մարդիկ ու խանումներ, նախ և առաջ երեխաներին բաղնիք տանում, շան կեղտով լվանում, որպեսզի հայության մեռոնից ու կրոնից դուրս գան, հետո դառնան իսկական թուրք: Հետո կնքահայրը գրկում էր երեխային, իսկ քիրվեն դհոլ, զուռնայի հնչյունների տակ թլպատում էր»[75]: «Անմարդավայել թլպատումից», ինչպես հուշագիրն է նշում այդ երևույթը, երեք ընկերներով խուսափում են ու որբանոցից գիշերով փախուստի դիմում[76]:

Խորեն Գըլըճյանը հիշում է, որ իրենց որբանոցում տնօրենության հրամանով բոլոր հայ երեխաներին տարել են Կ. Պոլիս ու թլպատել են[77]:

Թուրք ղեկավարները պարբերաբար այցելում էին որբանոցներ, ինչը միշտ ուղեկցվում էր տոնախմբությամբ ու բարձր ծափողջույններով: Մանկական հուշագրություններում այդ իրադարձությունը միշտ նույնացվել է համեղ ուտելիքների, տոնական ու կեղծ բարիդրացիական մթնոլորտի հետ: Ջեմալ փաշան մի քանի անգամ այցելել է Անթուրայի որբանոց, Էնվեր և Թալեաթ փաշաները՝ Հարբիեի:

Գ. Բանյանի հուշերում Ջեմալ փաշայի այցերից մեկի ժամանակ արտառոց է եղել այն փաստը, որ երեխաները դուրս են եկել վերահսկողությունից: Մի քանի հոգի մոտեցել են փաշային՝ դիմելով՝ «... անօթի ենք, հոս ալ անօթի պիտի մեռնինք ... հասիր մեզի...»: Այդ ընթացքում նրան մի քանի տասնյակ տղաներ են շրջապատել, որոշ երեխաներն էլ բակի ծառերի վրա են բարձրացել ու «պոռպոռալով ափով տերեւները եւ վայրի պտուղները քաղելով բերաննին թխմել»[78]: Սա թերևս միակ դեպքն է եղել, մյուս բոլոր այցերի ժամանակ խիստ կարգուկանոնի պայմաններում հայ երեխաների նվագախումբը դիմավորել է նրան:

Մ. Պետրոսյանի հուշերում նշվում է. «...մեծ ճիգ կը թափեին որ կարգապահութիւն ըլլայ ... ամէն կողմ զարդարեցինք ու մաքրեցինք...»[79]: Նա շրջել է բոլոր դասարաններով, «...մարզանքի տողանցքը ըրինք, տեսնելով որ շատ լավ եւ չափաւոր կը քալէինք, փաշան գոհ մնաց»[80]: Ճաշարանում նրանց լավ կերակրել են «ճոխ սեղանի» շուրջ[81]:

1917 թ. Ջեմալ փաշան կրկին այցելել է որբանոց. այս անգամ «...ֆանֆարը մեր տղաքները նուագեցին եւ մեզմէ մէկը սրինգով, շատ լաւ նուագեց, այս անգամ աւելի ներկայանալի էինք որմէ շատ գոհ մնաց փաշան»[82]: Հալիդե Էդիպն արտա-

---

75 ՀՑԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, թպ. 93, ֆ. հ. 4164, էջ15:

76 Նույն տեղում:

77 ՀՑԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ. հ. 44, թպ. 42, էջ 27:

78 Բանեան Գ., *նշվ. աշխ.*, էջ 148:

79 ՀՑԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ. հ. 231, թպ. 148, էջ 14:

80 Նույն տեղում, էջ 15:

81 Նույն տեղում:

82 Նույն տեղում:

հայտվել է հայ երեխաների երաժշտական ընդունակությունների վերաբերյալ՝ հայտարարելով, որ նրանք լավ երաժիշտներ էին ու դպրոցի հպարտությունը[83]:

Մարդինի որբանոցի տնօրենը՝ ազգությամբ լազ Շինաս բեյը, որբերին ցուցում էր տվել, որ զինվորական հրամանատարի՝ որբանոց կատարած այցի ընթացքում սննդի մասին հարցնելիս ասեն՝ «միշտ անօթի ենք»[84]: Այս այցը դրական արդյունք է ունենում, և որբանոցը սկսում է զինվորական նպաստներից էլ օգտվել: Նա երեխաներին տանում էր անգամ զինվորական, կառավարական ու ժողովրդական տոնախմբությունների[85]:

Որբանոցներում երեխաների թիվը նվազեցնելու համար եղել են նաև թունավորման դեպքեր: Հաճախ «բնական ճանապարհով» թունավորվել է ջուրը, երբ դիակներ են գցել որբանոցներին ջուր մատակարարող ջրհորները: Մարդինի որբանոցում թունավորման դեպքերը կապված էին հատկապես հացի օգտագործման հետ: Այդ կապակցությամբ Մարի Գրիգորյանը գրում է. «Օրերով հացի երես չտեսնելուց հետո ... երբ հաց ունենայինք, տղոցմէ ոմանք կը թունաւորուէին եւ կը մեռնէին կապուտցած: Երբ հացը կը կտրուեր, հիւանդութիւնն ալ կ'անհետանար հրաշքով»[86]:

Անթուրայի որբանոցում 1918 թ. վերջին թուրքական անձնակազմը հեռանալուց առաջ պատվիրել է դեղագործ Ռըզա բեյին վերջին ընթրիքի ժամանակ բոլոր որբերին թունավորել ու նոր միայն հեռանալ: Բայց Ռըզա բեյը ի կատար չեր ածել այդ հրամանը: Հետաքրքրական է այն փաստը, որ ճաշարանում նստած բոլոր երեխաներին հարցրել էր իրենց հայկական անունները, և բոլորը պատասխանել էին[87]:

Մի որոշ ժամանակ որբանոցում մնում են միայն մի քանի թուրք պահակներ, արաբ հսկիչներ, ովքեր զբաղվում էին հագուստի ու ուտելիքի խնդիրներով: Չնայած 1917 թ. Անթուրայում կենսապայմանների դրական փոփոխություններ էին եղել, անցկացվել էին ջրագիծ, կոյուղագիծ, ինչպես նաև որբանոցը էլեկտրաֆիկացվել էր[88], սակայն դա էապես չէր ազդել որբերի վիճակի բարելավման վրա:

1918 թ. սեպտեմբերին Արարայի ճակատամարտից հետո հայ կամավոր Պ. Պզտիկյանն ու մոտ հազար հոգանոց գումարտակը Բեյրութից Ջունեյ անցնելիս այցելել է Անթուրայի որբանոց: Պզտիկյանն իր ձեռագիր հուշագրությունում՝ թվագրված 1918 թ. դեկտեմբերի 6-ով, ներկայացրել է իրենց կարճատև այցի մանրամասները՝ ընդգծելով «...այդ կարօտակիզ փոքրիկ էակները, որոնց անգութ բաղդը զրկած էր իսպառ ծնողական ջերմ համբոյրէ»: Հրաժեշտից առաջ սրտապնդող հորդորներ են անում, որ «ազգը չի մոռնար իր փոքրիկ զաւակները»: Պզտիկյանը եզրափակում է իր հուշը հետևյալ տպավորությամբ. «...այդ որբանոցը,

---

83 *Memoirs of Halide Edip…*, էջ 449:

84 ՀՑԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ. հ. 397, թպ. 248, էջ 85:

85 Նույն տեղում:

86 Նույն տեղում, էջ 76:

87 Տե՛ս Ալբոյաճյան Հ., *Նշվ. աշխ.*, էջ 50:

88 Տե՛ս *Memoirs of Halide Edip…*, էջ 431:

դաժան, ցուրտ որբանոցը, փոքրիկ հոգիներուն մէջ իր մռայլը կը սփռէր: Ցաւի բոյնն էր անիկայ»[89]:

Որոշ ժամանակ անց Պզտիկյանն ընկերների հետ նորից է այցելել Անթուրա: Տպավորությունը նրա համար կրկին ցավալի էր. «Ոմանք հողի վրայ վիզիրնին ծռած՝ լուռ ու մունջ նստած ին, ուրիշնիր կու լան... պատանինիր, որոնք տարիներու ծանրութեան տակ ճնշուած ծերուկի մը փոսուացած աչքերը և կմախքացած այտիրը մատնանիշ կ'ընին»: Նա երկար զրուցել է որբերի հետ, հետո շրջայց է կատարել որբանոցում: Նրա աչքին զարնում է այն մեծ տարբերությունը, որը նա տեսնում է ուսուցիչների ու որբերի կենսապայմանների ու սննդի միջև[90]:

Հիվանդանոցային սենյակներում մոտ հարյուր երեխաներ են եղել, որոնց մասին հուշագիրը պատմում է. «...քով քովի, զոյգ զոյգ պառկած ին: Ոմանք հալած, կմախքացած, միծ փայլուն աչքերնին առաստաղը»[91]: Դաստիարակչուհին արդարացել է, թե «...բժիշկնիս ծիր է և իր պաշտօնին օգտակար ըլլալու յարմարութինէ զուրկ, սնունդը բոլորովին աննպաստ, կաթը որ ամենէն սովորականն է, կիսով ջրախառն»[92]: Մյուս սենյակում աղիքային հիվանդությամբ երեխաների վիճակից ազդվելով՝ գրում է. «...պաղ սալահատակի վրայ փռուած անկողիններու մէջ պառկած անխօս բանտարկուածներու պէս կ'իրազին: Հոս ալ չկայ լուրջ խնամք մը, ապաքինումը բաղդի քմահաճոյքին յղուած է»[93]: Վարակների տարածումը կանխելու համար զգուշութեան ոչ մի միջոց չէր ցուցաբերվում: Տեսուչի հետ զրույցի ժամանակ Պզտիկյանը քսանից ավելի մանուկների է տեսնում միջանցքով անցնելիս՝ «բոբիկ, ճիրմակ գիշերանոցով, ճիրմակ շղարշ մը գլուխնին»[94]: Հուշագիրը նշում է, որ նրանց որբանոցում «գոնչիր»[95] էին անվանում[96]: Պզտիկյանի նամակները ևս փաստում են, որ Անթուրայում իրավիճակը ծանր էր, իսկ քաղաքական նման պայմաններում հայ որբերը լրիվ բախտի քմահաճույքին էին թողնված:

դ. Որբերին հայ ինքնությանը վերադարձնելու ձեռնարկումները

1918թ. Մուդրոսի զինադադարից հետո մեծ թափ են ստանում որբահավաք աշխատանքները: Բազմաթիվ կազմակերպություններ հավաքագրում էին հայ որբերին, նոր որբանոցներ էին բացվում, կամ թուրքական որբանոցներն անցնում էին տարբեր միսիոներական կամ բարեգործական կազմակերպությունների: 1919 թ. ապրիլի 17-ին Կ. Պոլսում՝ Ազգային խնամատարության կազմում, ստեղծվում է Որբա-

---

89 ՀՑԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ. հ. 255, թպ. 155:

90 Նույն տեղում:

91 Նույն տեղում:

92 Նույն տեղում:

93 Նույն տեղում:

94 ՀՑԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ. հ. 256, թպ. 155:

95 Գոնչիր՝ թուրքերենից թարգմանաբար՝ մեծագլուխ: Սրանք այն երեխաներն էին, որոնք ցեղասպանության տարիներին սարսափելի նիհարել էին, փոխարենը մարմնի համեմատ գլուխներն էին չափից ավելի մեծացել:

96 ՀՑԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ. հ. 256, թպ. 155:

հավաք մարմինը, որը ղեկավարում էր Առաքել Չաքրյանը: Կազմակերպությունը, ունենալով Կ. Պոլսում բրիտանական դեսպանատան պաշտոնյա, հրամանատար Սմիթի աջակցությունը, ավելի ընդգրկուն է դարձնում որբահավաք աշխատանքները: 1919 թ. ապրիլի 4-ի իր տեղեկագրում, ի թիվս այլ հայանպաստ գործողությունների, Ա. Չաքրյանն առաջին կետով նշում է. «Թուրք որբանոցներէ եւ տուներէ ազատել հայ որբերը»[97]:

Անթուրայում թուրքական կողմի հեռանալուց հետո տեղի Ամերիկյան կարմիր խաչի աշխատակից Բայարդ Դոջն օգնություն է հատկացրել որբանոցին: Տնօրեն է նշանակվել պարոն Քրոուֆորդը: Հայ ուսուցիչներ են աշխատանքի անցել, ուսուցումը կատարվել է հայերենով և անգլերենով: Սկսվել է հայացման գործընթացը. բոլորը վերականգնել են իրենց հայկական անունները, մայրենի լեզվի դասերը: «Քանի ամիս մը հետո... հեգելով, ծանր-ծանր վանկերը կապելով բառերը դուրս կուգան տղոց բերնէն»[98]:

Հետագայում Մերձավոր Արևելքի նպաստամատույց կազմակերպությունն է ստանձնել որբանոցի խնամակալությունը, մինչև 1919-ի աշունը, երբ արական սեռի 470 որբերին ուղարկել են Հալեպ, իսկ իգական սեռի 200 որբերի՝ Լիբանանի Ղազիր ավանում գտնվող հայկական որբանոց[99]:

Խ. Գրլրճյանը հիշում է, որ հայ կաթոլիկ վարդապետ Հովհաննես Նալբանդյանն այդ ժամանակ եկել է որբանոց՝ հայ որբերին տանելու: Որբանոցում այդ ժամանակ կար մոտ 2500 երեխա: Նա երեխաներին դիմել է հայերենով. «...հայ զաւակներս, պատերազմը վերջացած է, ես եկած եմ ձեզ այս դժոխքէն ազատելու, մի վախնաք, ինծի վստահեցէք, դուք պիտի վերադառնաք հային ծոցը, եւ պիտի վերագտնէք ձեր մայրերը, որ գիշեր եւ ցերէկ լացին»[100]: Այս խոսքերից հետո մոտ 200 հոգի մոտեցել են քահանային: Այս փաստը ոգևորել է վարդապետին, ով «... յաջողած էր իր առաքելութեան մէջ»[101]: Տարիներ անց Խորենը, վերլուծելով այդ օրվա դեպքերը, նշում է. «մէզմե փոքրիկները մնացին թրքական որբանոցի մէջ ու կորսուեցան...»[102]:

Մարի Գրիգորյանը հիշում է արդեն Բեբեքի որբանոց իրենց այցելած հայ քահանային ու մի քանի հայ տիկինների, ովքեր զինադադարից հետո եկել էին հայ որբերին տանելու: Արմենուհի Բոյաճյանը որբերին կոչ է արել վերհիշել մայրենի լեզուն[103]:

---

97 Զաւեն արք., *նշվ. աշխ.*, էջ 289:

98 Բանեան Գ., *նշվ. աշխ.*, էջ 272:

99 Բարսեղյան Ն., Միսակ Քելեշյանի բացահայտումները թուրքացած հայ որբերի վերաբերյալ (տե՛ս *http://akunq.net/am/?p=3029)*:

100 ՀՑԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, թպ. 42, ֆ. հ. 44, էջ 29:

101 Նույն տեղում:

102 Նույն տեղում:

103 ՀՑԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, թպ. 248, ֆ. հ. 397, էջ 94-95:

Կեսարիայի հայրենակցական միության ջանքերով տեղի թուրքական որբանոցի երեխաները Հալեպ ու Կ. Պոլիս են փոխադրվել[104]:

Այսպիսով, երիտթուրքական կառավարության ռազմավարությունը նպատակ ուներ թիրախային խմբին, տվյալ դեպքում հայ երեխաներին զրկելու սեփական կենսաբանական-ռասայական բնորոշումներից, ինքնությունից՝ աստիճանաբար վերածելով մի այլ ինքնության: Նա հետևողականորեն, ծրագրված հետամուտ է եղել այս քաղաքականությանը մինչև 1918 թ. Մուդրոսի զինադադարի կնքումը, հետագայում թուրքական որբանոցները հանձնվել են միսիոներական, օտարերկրյա և հայկական կազմակերպություններին:

Հայ որբերի թրքացման գործընթացն իրականացվել է մի քանի փուլերով, որից առաջինը հավաքագրման ու տեղափոխման հարցերի լուծումն էր: Օսմանյան կառավարությունը շտապում էր նրանց հավաքագրել, քանի որ մտավախություն ուներ, թե միսիոներական, բարեգործական կազմակերպություններն իրենից շուտ կհաջողեն այդ գործում: Երկրորդ փուլով նրանք, հայ որբերին կենտրոնացնելով որբանոցներում, սկսում էին բուն գործընթացը՝ նրանց անվանափոխելով, թլպատելով, իսլամի դասեր կազմակերպելով: Չնայած «Բացահայտումները թուրքացած հայ որբերի վերաբերյալ» հոդվածում[105] նշվում է, որ հայ երեխաներին անվանափոխում էին՝ պահպանելով նրանց նախնական անունների սկզբնատառերը, սակայն նշենք, որ հուշագրություններում մենք նման դեպքերի չենք հանդիպել, ավելին՝ թուրքական կողմը խուսափում էր նմանօրինակ մանրուքներից անգամ, որը հայ որբերին կհիշեցներ իրենց անցյալը: Նրանք նախընտրում էին երեխաներին դիմել միայն իրենց թվերով՝ զրկելով նրանց ոչ միայն իրենց ազգային ինքնությունից, այլ նաև անհատականությունից: Դեպքեր են եղել, երբ ղեկավարությունը որբանոցում աշխատակիցներ չունենալու պարագայում էլ հեռացրել է որբանոցում աշխատող հայ կանանց՝ վախենալով, որ նրանց ներկայությունը որբերի համար կարող է հայկական ինքնագիտակցության խթան դառնալ:

Վախի մթնոլորտը, պատժամիջոցների կիրառումն առաջին հայացքից կարծես հաջողում են. որբերը դադարում են միմյանց հետ խոսել հայերեն, սակայն հուշագրություններում բոլոր հեղինակները նշում են, որ քնելուց առաջ ծածկոցի տակ միշտ խաչակնքել են, ծնողներից լսած «Հայր մեր»-ից հատվածներ կրկնել, երբեմն էլ աղոթք չհիշելով՝ իրենց ու իրենց հարազատների անուններն են կրկնել՝ չմոռանալու համար:

Թուրքական կառավարությունն իր այս քաղաքականության իրագործման ընթացքում միշտ էլ մտավախություն է ունեցել և վերապահությամբ է մոտեցել իսլամացած հայերին: Նշենք, որ Կ. Պոլսից հրաման է եղել, որով իսլամանալու

---

[104] Ուշագրավ է այն փաստը, որ «իբրև» թուրք արձանագրված որբերի հայ լինելու փաստը ստուգելու համար ստեղծված խառը հանձնաժողովն արձանագրել է, որ 319 երեխաներից մոտ 50 տոկոսը մոռացել էին իրենց ծագումը: Մանրամասն տե՛ս Եղիայեան Բ., *Ժամանակակից պատմութիւն…*, էջ 97-98:

[105] Տե՛ս Բարսեղյան Ն., Միսաք Քելեշյանի բացահայտումները թուրքացած հայ որբերի վերաբերյալ...:

թույլտվություն է տրվել միայն կենտրոնական իշխանությունների հավանությունը ստանալուց հետո կամ էլ միայն մուսուլմանների հետ ամուսնացած կանանց[106]: Որբանոցներում ավելի հեշտ էր վերահսկել իսլամացման գործընթացը, որին էլ ի սկզբանե միտված էր թուրքական կառավարությունը: Սակայն նրա քաղաքականությունը երկար չի գործում: 1919 թ.՝ զինադադարի առաջին վեց ամիսներին, կարևոր միջոցներ են ձեռնարկվում որբերին վերադարձնելու ուղղությամբ: «Որբահավաքի» ժամանակ միջազգային կազմակերպությունները, մասնավորապես Ամերիկյան Մերձավոր Արևելքի նպաստամատույցը, Լոնդոնի քաղաքագլխի հիմնադրամը, դանիական, շվեյցարական ու այլ կազմակերպություններ կարողանում են որբանոցներից դուրս բերել և փրկել թրքացման ճանապարհին գտնվող բազմաթիվ հայ երեխաների: Սակայն պետք է նշել, որ առավել փոքր տարիքի երեխաների մի ստվար հատված, չհիշելով իր ինքնությունը, երբեմն էլ անցյալի վերապրումները կրկնվելու վախից ելնելով, նախընտրել է լռել իր հայ լինելու մասին և այս ճանապարհով ձուլման է ենթարկվել:

ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹՐՔԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՐԲԱՆՈՑՆԵՐՈՒՄ (1915 -1918ԹԹ.)

Նարինե Մարգարյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայ երեխաների թրքացման քաղաքականությունը երիտթուրքական կառավարությունն իրականացրել է նաև պետական մակարդակով, որի համար հիմք են ծառայել պաշտոնական հրամաններն ու հեռագրերը: Թուրքական որբանոցներ են բացվել Հալեպում, Անթուրայում, Բեյրութում, Դամասկոսում, Մերդինում, Արմաշում, Ուրֆայում, Դիարբեքիրում, Մալաթիայում, Խարբերդում, Կեսարիայում և մի շարք այլ բնակավայրերում: Հայ երեխաներին հավաքագրելուց ու որբանոցներում կենտրոնացնելուց հետո սկսվում էր բուն գործընթացը. մայրենի լեզվով հաղորդակցվելը խստիվ արգելվում էր, նրանց թուրքական անուններ էին տրվում, թլպատում էին, կազմակերպում իսլամի և ղուրանի դասեր, քարոզում թուրքական ազգայնական գաղափարներ:

Վերլուծվել է որբանոցներում իրականացվող թրքացման քաղաքականությունը, ներկայացվել կիրառվող մեթոդների հետ կապված որոշ նոր մանրամասներ: Շրջանառության մեջ են դրվել անտիպ հուշագրություններ:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, թրքացման քաղաքականություն, թուրքական պետական որբանոցներ, հայ որբեր, բռնություն, անվանափոխություն, ինքնության կորուստ, հուշագրություններ:

---

[106] Akçam T., *նշվ. աշխ.*, էջ 296-304:

TURKIFICATION OF ARMENIAN CHILDREN IN THE OTTOMAN EMPIRE'S STATE ORPHANAGES (1915-1918)

Narine Margaryan

SUMMARY

The Young Turks government carried out a policy of turkification of the Armenian children also on the state level led by the official orders and telegrams. Turkish orphanages were opened in Aleppo, Antura, Beirut, Damascus, Merdin, Armash, Urfa, Diyarbakir, Malatya, Kharberd, Caesarea, and in other settlements. After collecting the Armenian children in the orphanages, a state orchestrated Turkification policy was carried out by different means, namely, it was strictly prohibited to communicate in the native language, children were given Turkish names and circumcised, they had lessons in Islam and Quran, implanted with Turkish nationalistic ideas. This article analyses turkification policy in orphanages also by presenting some new details on the methods used. Unpublished memoirs are put into circulation.

Keywords: Armenian Genocide, Turkification policy, Turkish State orphanages, Armenian orphans, violence, loss of identity, memoirs.

ОТУРЕЧИВАНИЕ АРМЯНСКИХ ДЕТЕЙ В ГОСУДАРСТВЕННЫХ ДЕТСКИХ ДОМАХ ОСМАНСКОЙ ИМПЕРИИ (1915-1918 ГГ.)

Нарине Маргарян

РЕЗЮМЕ

Правительство младотурок проводило политику отуречивания армянских детей также на государственном уровне, для чего в качестве основы служили официальные приказы и телеграммы. Турецкие детские дома были открыты в Алеппо, Антуре, Бейруте, Дамаске, Мардине, Армаше, Урфе, Диарбекире, Малатье, Харберде, Кайсери, а также в ряде других населенных пунктов.

После сбора армянских детей в детских домах проводился процесс отуречивания: общение на родном языке было строго запрещено, детям давали турецкие имена, проводили обрезание, были организованы занятия по исламу и Корану, в детях укореняли турецкие националистические идеи.

В статье проанализирована политика отуречивания в турецких детских домах, представлены некоторые новые подробности об использовавшихся методах. Введены в научный оборот ранее неопубликованные мемуары.

Ключевые слова: Геноцид армян, политика отуречивания, турецкие государственные детские дома, армянские дети-сироты, насилие, переименование, потеря идентичности, воспоминания.